Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19 Մարտի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղայանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասրյանը, Ն. Ավետյանը, Լ. Գալֆայանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյան:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Ոռոգման համակարգերում վերականգնման (կառուցման) աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության իրականացման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2024 թվականի մարտի 11-ին, ժամը 16:00-ին:

Հրավերում կատարված փոփոխություններ

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ	ք. Գյումրի, Շիրակացի փ. 83շ., բն.40 041 822822	arxitects@mail.ru
«Ջրարբի» ՍՊԸ	ք. Երևան, Նանսենի 6, բն. 24 094 643117	jrarbi.j@gmail.com
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	ք. Երևան, Կոմիտաս 54բ 093 800009	ekspertizaproektov@mail.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **Գնման գին – 8 897 090 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Ոռոգման համակարգերում վերականգնման (կառուցման) աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության իրականացման ծառայություններ				

1	«Ջրարբի» ՍՊԸ	5 700 000	0	5 700 000
2	«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ	6 850 000	0	6 850 000
3	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	7 035 000	1 407 000	8 442 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Ջրարբի» ՍՊ, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊ և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲ ընկերությունները հայտով ներկայացրել են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը: Մասնակից «Ջրարբի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1-ում լրացված չէ «Ընդհանուր գինը /տառերով և թվերով/» սյունակը:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակից «Ջրարբի» ՍՊԸ-ին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը (20.03.2024թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Է. Բաղալյան

անդամներ _____ Ս. Ասրյան

_____ Ն. Ավետյան

_____ Լ. Գալֆայան

_____ Ս. Աբազյան

Քարտուղար _____ Ս. Գալստյան